





պէտք ունենալը կը յայտնէ: Մինչ Օրին յոյս ունի երկրին մէջ ստեղծուելիք հայկական ոյժերուն վրայ, Արիստակէս վարդապետը նման յաւակնութիւն մը չունի, եւ այդ մասին ոչ կը յուսայ եւ ոչ ալ կ'առաջարկէ: Իր յոյսը անկազմակերպ, անդէն եւ անպատրաստ հայերուն վրայ չէ, այլ 60-000 տուն հաշուով թուրքմէն եւ անյայտ թիւով Եզիտի քիւրտերու վրայ է: Վարդապետը կը հաւատէ որ ան արդէն բանակցած է Թիւրքմէններու եւ Եզիտիներուն հետ եւ կ'աւելցնէ որ «ինձ խօսք են տուել, որ ես ձեզ ծանուցանեմ», անտարակոյս յաջողութեան պարագային՝ քրիստոնէականութեամբ ինչպէս նաեւ թէ ծրարուած արշաւանքին ատեն՝ կը միանան արշաւող վարդապետին բանակին եւ «գլխաւոր շուտով կու ջարդեն»:

Առ այժմ ի վիճակի չեմ ըսելու որ իրապէս Արիստակէս վարդապետ բանակցած էր Թիւրքմէններու եւ Եզիտիներու հետ, թէ պարզապէս իր կողմէն յերկրորդ խաղ մը կը կարծէր դրած ըլլալ: Ծրարին մէջ ոչ մէկ խօսք թէ 12-000 հոգին ո՞ր պիտի հաւաքուի, Եւրոպական ո՞ր պետութեան մէջ, ի՞նչ միջոցներով այդ բանակը պիտի ղեկավարէ, պարէնաւորութիւն: Ո՞վ պիտի տայ պարէնի, զինամթերքի ծախքերը, փոխադրանքները որոնց կողմէ պիտի հայթայթուին: Չեմ կարծեր որ վարդապետին ուղած հանդանակութեան թուղթով Հայոցմէ հաւաքուած դրամը բաւէ ասոնց համար: Յետոյ վարդապետը մութ թողուցած է կէտեր, որոնք դուրս անկարելի են. թէ 12-000-նոց այս արշաւախումբը թրքական ո՞ր հողամասին վրայ ցամաք պիտի ելլէ: Գաղտնի՞ պիտի ըլլայ այս 12-000-նոց բանակին ցամաք ելլելը: Վարչական ի՞նչ վիճակով պիտի կառավարուին գրաւուած հողամասերը: Ո՞վ պիտի ըլլայ տիրապետող տարրը: Վարդապետը, որ պայման կը դնէ «12-000 մարդով առաջ զօրապետ ու զօրավար լինիմ ու յառաջ զնամ տիրելով եւ նուաճելով զտէրութիւն եւ զերկիր» չեմ կարծեր

թէ յուսար թաղաւոր օծուիլ ինչպէս Օրին կը յուսար: Վարդապետը տիրակալող Եւրոպական որեւէ պետութիւն չի յիշեր, կ'երեւի թէ չի ուզեր, կամ թէ կարելի չի նկատեր յիշել:

Վարդապետը իրապէս զարմանալի պիտի նկատէի եւ շատ միամիտ, եթէ սակայն յանկարծ չպարզէր որ ունի աննշման, անհաւատալի զիւտ մը, որուն շնորհիւ բոլոր իմ աւելորդ վախերս ու հարցումներս օդը կը ցնդին, եւ զիս իմ կասկածամտութեանս պատճառաւ արհամարհելի կ'ընեն:

Արիստակէս վարդապետ կամ Եպիսկոպոս կ'ըսէ որ Զինուած զին «ուսել» է «սրտ եւ հնար» մը, այսինքն զաղտնիք մը, հնարք մը, որուն դէմ կենալ չէ կարելի, եւ ոչ մէկ բան կրնար ընդդիմանալ: Վարդապետին իսկ խօսքերով «ոչ բերդ, ոչ սուր, ոչ ձոր, ոչ ծով, ոչ ցամաք, ոչ բազմութիւն զօրաց եւ զինուորաց իմ զիտացած բանին հնարքին դէմ չի կարեր կենալ»: Մէկ խօսքով տեսակ մը հիւլէական ուսմը, ոյժ, գերազոյս զօրութեամբ:

Դժբախտաբար յայտնի չէ թէ Ժողովը կամ Պապը համաձայնեցան, որ վարդապետը իր հնարքը ցոյց տայ: Հաւանական է որ այդքան ահարկու զաղտնիքէ մը խրաչած ըլլան եւ արդիւրած ըլլան որ Արիստակէս վարդապետ իր հնարքը չինէ ու կապէ, եւ ասիկա հակառակ իր ազդարարութեան՝ թէ «Զայս ամէն բաներս», անտարակոյս բազմալեզու տապալուութիւններ, Ար. Մարիամ Եզիպտացւոյ վանքին իրեն տրուելը, հանդանակութեան արտօնագրի իրեն շնորհուիլը, 12-000-նոց բանակին կազմութիւնը, ինչպէս նաեւ հնարքին շինութիւնը եւ կազմութիւնը «չուտով պիտի հողացած, եւ արած» ըլլայ... որպէսզի Թիւրքմէնները եւ Եզիտի քիւրտերը ակնկոյր մնալով չյուսահատին:

Արդար ըլլալու համար՝ ըսենք որ Արիստակէս վարդապետ ոչ մէկ ակնարկութիւն ունի հայկական ազատագրու-

քեան մը մասին: Հաւանաբար ան միակ բանակցողն է որ արեւմտահայերը (կամ արեւելահայերը) չի ներկայացներ, եւ լիազօրուած չէ գաղտնի կրօնական, աշխարհական կամ խառն ժողովներէ, զաղտնիքն կատարուած տեղեր ու տեղանքներ, որոնց մասին մեր օրերուն շատ մը նշանաւոր եւ աննշան պատմադէտներ, բանասէրներ, իրականին մէջ զարմանալի ու խորագէտ գաղտնագետներ, իրենց ունեցած ծանօթութեամբ (այդ զաղտնի Ժողովներուն, անոնց զաղտնի որոշումներուն, վճիռներու մասին) դոնէ զիս հիացմամբ ափ ի բերան կը թողուն:

Արիստակէս վարդապետ էջմիածին, Կ. Պոլիս, Հալէպ, Երուսաղէմ, Իզմիր, կամ որեւէ ուրիշ տեղ՝ Ժ. զարուն՝ կատարուած զաղտնի Ժողովէ մը չէ որ զըրկուած կ'երեւի: Ան ինքն իր զխոսն զօրծող մէկը կը թուի: Ինչ որ աւելի նշանակալից է՝ այն է որ ցնորական յոյսեր չունի իր ազդակիցներուն արտակարգ կարողութեանց վրայ, բացի անոնցմէ զրամ հաւաքելու տարօրինակ լաւատեսութենէն:

Ոչ ալ երազատես է ան: Ուրիշներու նման յիմար մը չէ՝ խորհելու թէ կեդրոնական Եւրոպայէն մուրացածոյ մէկ կամ երկու հազար հոգիով, քանի մը թնդանօթներով, առանց զրամի, առանց պահեստի, առանց թիկունքի, շարաթներ յոյնատանջ ճամբորդելէ վերջ՝ օտար երկրի մը մէջ, անոր ահարկու պետութեան դէմ մարտնչի: Արիստակէս վարդապետ ոչ միայն 12-000-նոց բանակի մը կարելի կը գտնէ, այլ նաեւ անհրաժեշտութիւն կը նկատէ Թիւրքմէն եւ Եզիտի ցեղախումբերու համահաւաք զինակցութեան: Ասիկա ինքնին շատ աւելի լուրջ, ձեռնհաս, իրատես, ծրարող մը կ'ընէ, յանձնու աւելի վստահելի, քան սանձարձակ Օրին ու իր տղայամիտ ծրարները:

Արիստակէս վարդապետի մտայնութեան մէկ շահեկան կէտն այն է որ հա-

ւասարապէս Օսմանեան կայսրութեան բոլոր ժողովուրդներուն փրկութիւնը կը հետապնդէ, եւ ոչ թէ միայն հետամուտ է Հայոց փրկութեամբ: Ան կ'ուզէ հայերուն հետ կրթել թուրքերն ալ, պարսիկներն ալ, արաբներն ալ: Իրաւ է որ իր ժամանակուան եւ իր ըմբռնման կրթութիւնը քրիստոնէական հաւատքով կը սահմանաւորէ, եւ սակայն ան ուշիմութիւնը ունի խորհելու որ Օսմանեան պետութեան բոլոր ենթակայ տարրերը պէտք է հաւասարապէս կրթել, բարձրացնել, եւ այսպէսով շահիլ զանոնք դէպի աւելի լաւ կեանք մը: «Աստուած չանի» կ'ըսէ ան իրական վախով եւ մտահոգութեամբ, որ Թիւրքմէնները եւ Եզիտիները «յուսահատել մեզմից»... որովհետեւ այն ատեն «Խիստ վատ կլինի ամենայն քրիստոնէից», եթէ նոքա թուրքին «օգնական լինին»:

Որքան որ Արիստակէս վարդապետին նամակը զուարճալի նկատեցի, սակայն ան բացառապէս մեզի ծանօթ մեր ազգային ազատագրողներուն մէջ ամէնէն իրատես, ամէնէն խելացի ծրար չմը, թէեւ անմշակ, ունէր իր խորքին մէջ: Այսինքն խելահաս էր Օսմանեան կայսրութեան ընտելութեան մէջ առ հասարակ ինքնագիտակցութիւն տարածելու, եւ երկրորդ՝ որեւէ հակա-Օսմանեան կռիւի ժամանակ օգտակար ըլլալու զանազան ցեղախումբեր, զանոնք ներքին ըմբոստութեանց մղելով: Բնական է մեր խօսքը Ժ. զարուն համար է:

Այսքանով կ'աւարտեմ այս հետաքրքրական վաւերացութիւն մասին: Փոքր, այլ շահեկան պատառիկ մըն է Ժ. զարու հայկական քաղաքական մտայնութեան եւ ըմբռնումի մասին. ըմբռնում մը՝ որուն արտայայտութեան այլուր հանդիպած ըլլալ չեմ յիշեր երկար պրպտումներու ընթացքին:

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ